ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 14.07.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-23/14 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-23/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Քամ են Գո» ՍՊԸ-ի կողմից 23.06.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-23/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Քամ են Գո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ նաև Կենտրոն) ներկայացված բողոքով «Քամ են Գո» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) հայտնել է, որ 2014թ. մայիսի 31-ին ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով մրցույթ:

«Քամ են Գո» ՍՊԸ-ի կողմից 10.06.2014թ. սահմանված կարգով http://www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով ներկայացվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» մրցույթի հայտը:

Հայտը բացվել է 11.06.2014թ. և Ընկերությունը ստացել է ծանուցում այն մասին, որ «Քամ են Գո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «ԳԱԿ-ՇԱՊՁԲ-11/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով մրցույթի հայտը սահմանված կարգով հաստատվել է և ներկայացվել է գնահատման հաջորդ փուլ: Սակայն մրցույթի հայտերի բացման հաջորդ աշխատանքային օրը, Ընկերության գլխավոր հաշվապահ Կ. Սեդրակյանը՝ հետագա տեղեկատվություն ստանալու նպատակով, ՀՀ պաշտպանության նախարարությունից տեղեկացվել է, որ Ընկերության կողմից ներկայացված մրցույթի հայտը համարվել է հետագա գնահատման համար անբավարար և մերժվել է:

Ընկերության պնդմամբ խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի և 5-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ մասի պահանջները:

Ելնելով վերագրյալից՝ Ընկերությունը խնդրել է կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇԱՊՁԲ-11/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով մրցույթը համարել անվավեր և նշանակել նոր մրցույթ:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 25.06.2014թ. N 04/032-1125 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով կարծիք տալ Կենտրոնում 23.06.2014թ. «Քամ են Գո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 02.07.2014թ. N ԴՎԱ/1754 գրությամբ «Քամ են Գո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ «Քամ են Գո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտն ընդունվել է http://www.armeps.am էլեկտրոնային կայքի կողմից և համարվել է հետագա գնահատման համար ընդունելի: Սակայն գնահատման ժամանակ պարզվել է, որ հայտին որևէ փաստաթուղթ կցված չէ, ուստի և հանձնաժողովը դրանք ներբեռնելու և գնահատելու հնարավորություն չի ունեցել:

Հիմք ընդունելով հրավերով (ծանուցմամբ) պահանջվող որևէ փաստաթուղթ չներկայացնելու փաստը՝ հանձնաժողովը որոշել է մերժել «Քամ են Գո» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը գտնում է, որ Ընկերության կողմից http://www.armeps.am կայքը թերի ուսումնասիրելու արդյունքում սխալ հայտ կազմելը չի կարող հիմք հանդիսանալ ընթացակարգը չեղյալ համարելու համար, քանի որ նշված ընթացակարգին

հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել թվով տասնհինգ մասնակից, և ապահովվել է բավարար մրցակցություն:

3. **<u>ԳԲԽ-23/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Քամ են Գո» ՍՊԸ-ի կողմից 23.06.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքը մերժել:

4. **<u>ԳԲԽ-23/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-23/14 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.</u>**

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Քամ են Գո» ՍՊԸ-ի կողմից 23.06.2014թ. ներկայացված բողոքը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին ներկայացրած 02.07.2014թ. N ԴՎԱ/1754 գրությունը, համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպության 02.07.2014թ. N 095/07.14 գրությունը և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակեպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

«Քամ են Գո» ՍՊԸ-ն 23.06.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ 10.06.2014թ. <u>http://www.armeps.am</u> էլեկտրոնային կայքի միջոցով ներկայացրել է Ընթացակարգին մասնակցելու հայտը:

Հայտերի բացման նիստը կայացել է 11.06.2014թ., և Ընկերությունը ստացել է ծանուցում այն մասին, որ «Քամ են Գո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «ԳԱԿ-ՇԱՊՁԲ-11/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով ընթացակարգի հայտը սահմանված կարգով հաստատվել է և ներկայացվել է գնահատման հաջորդ փուլ: Սակայն հայտերի բացման նիստի հաջորդ

աշխատանքային օրը, Ընկերության գլխավոր հաշվապահ Կ. Սեդրակյանը ՀՀ պաշտպանության նախարարությունից տեղեկացել է, որ Ընկերության կողմից ներկայացված մրցույթի հայտը համարվել է հետագա գնահատման համար անբավարար և մերժվել է:

Ընկերության պնդմամբ խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի և 5-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ մասի պահանջները:

Բողոքը քննող հանձնաժողովին Ընկերությունը խնդրել է կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇԱՊՁԲ-11/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով ընթացակարգը համարել չկայացած և նշանակել գնման նոր ընթացակարգ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 02.07.2014թ. Կենտրոնին ներկայացրած N ԴՎԱ/1754 գրությամբ հայտնել է, որ «Քամ են Գո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտն ընդունվել է http://www.armeps.am էլեկտրոնային կայքի կողմից և համարվել է հետագա գնահատման համար ընդունելի: Սակայն գնահատման ժամանակ պարզվել է, որ հայտին որևէ փաստաթուղթ կցված չի եղել, և հանձնաժողովը դրանք ներբեռնելու և գնահատելու հնարավորություն չի ունեցել:

Կենտրոնում՝ 07.07.2014թ. ժամը 16:00-ին կայացած բողոքը քննող հանձնաժողովի նիստի ընթացքում բողոքը քննող հանձնաժողովի ներկայությամբ, իսկ 10.07.2014թ. ժամը 14:00-ին Կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպված քննարկմանը «Քամ են Գո» ՍՊԸ-ի ներկայացուցչի ներկայությամբ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչը բացեց Ընկերության կողմից ներկայացված հայտը: Նշված էլեկտրոնային հայտի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ Ընկերության՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով պահանջվող դիմումը և գնային առաջարկն առկա չեն, ինչի արդյունքում վերջինիս հայտը մերժվել է:

Միաժամանակ, այլընտրանքային կերպով բացվեցին նաև Ընթացակարգին մասնակցող այլ կազմակերպությունների հայտեր, որոնք ներառում էին հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Կազմակերպված քննարկման ժամանակ Կենտրոնի այն հարցին, թե Ընկերության հայտը մերժելիս Պատվիրատուն թույլ է տվել որևէ ոչ իրավաչափ գործողություն կամ անգործություն, Ընկերության ներկայացուցիչն ընդունեց, որ թե՛ պատվիրատուի և թե՛ գնահատող հանձնաժողովի կողմից որևէ ոչ իրավաչափ գործողություն կամ անգործություն թույլ չի տրվել:

Կենտրոնը 27.06.2014թ. N 09/032-1153 գրությամբ դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը, որն ուսումնասիրելով խնդիրը, հայտնել է, որ համակարգը չի կարողացել գաղտնազերծել փաթեթը, ինչը նշանակում է, որ այն լիարժեք չի եղել: Միաժամանակ, ընկերությունը տեղեկացրել է, որ հայտերը պատրաստվում են օգտագործողի մեքենայի վրա և դրանց պարունակությունը հասանելի է դառնում մրցույթի բացումից հետո:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 05.12.2013թ. N 1370-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի՝

- 20-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի առաջին բացող անդամն իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացնում բացման ենթակա այն հայտերի ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատում է իրեն ներկայացված հայտերի ցուցակը:
- 21-րդ կետի համաձայն՝ գնահատման գործընթացը կատարվում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «Քամ են Գո» ՍՊԸ-ի հայտը մերժելով գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ և թույլ չի տվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտում:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը Գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Քամ են Գո» ՍՊԸ-ի կողմից 23.06.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը մերժել:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Անդամներ՝ Սերայդարյան Հովհաննես

Վարդանյան Սեդրակ